

Վ Ի Բ Ա Բ Ո Ւ Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

III

Վիրարոժութեան հսկայական թափին ու յառաջդիմութեան համար էական գործօններ եղան, ինչպէս տեսանք, զգայազրկութեան և հականիւսումի երկու հիմնական գիւտերը: Աստեղծէ զատ զանազան երկրորդական ազգակիներ եկան նպաստել վիրարոժութեան կատարելագործման: Այս տեսակետէն պէտք է յիշել Ռէօնթկէնեան ճառագայթներով քննութիւնը կամ շոյաքննութիւնը (radioscopie) եւ շոյանկարումը (radiographie), ներքննութիւնը (endoscopie), աշխատանոցային քննութիւնները, պատուաստները (vaccins) եւ շիճուկները (sérum), արեան փոխարկումը (transfusion de sang), արուեստական շիճուկի (sérum artificiel) ներարկումը եւ վիրալ ուժական գործիքներու կառարկագործումը: Կ'արժէ համառօտ ծանօթութիւններ ունենալ այս բոլորին մասին:

ա. — ՇՈՂԱՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՈՂԱՆԿԱՐՈՒՄ

Ներկայիս շատերը գիտեն թէ ինչ բան են Ռէօնթկէնեան կամ Ք. ճառագայթները, որոնք գտնուած են 1895ին Գերմանացի Ռէօնթկէնի կողմէ: Յիշեալ ճառագայթները կամ շողերը, որոնք անտեսանելի են, կ'անցնին անթափանց մարմիններէն, ինչպէս սովորական լոյսը ապակիէն, բայց ոչ բոլորէն հաւասարապէս: Ոմանք, ինչպէս կապարէ մարմինները, բոլորովին անթափանցելի են Ք. ճառագայթներուն, ուրիշներ՝ առաւել կամ նուազ թափանցելի են:

Եթէ մարդկային մարմինը ենթարկենք այս ճառագայթներուն և անոր ետեւը զետեղենք մասնաւոր լուսարդել մը (écran), տեսակ մը հայելի, կը ստանանք պատկեր մը, զոր կարելի է լուսանկարչական ապակիի վրայ առնել: Այդ պատկերը կամ նկարը ցոյց կուտան մարմինն ներքին կազմուածքը իր բնական կամ անբնական վիճակին մէջ, ուրիշ կարելի է թանկագին անդեկուլթիւններ քաղել, թէ արտաճանաչութեան և թէ զարմանումի համար:

Այսպէս՝ եթէ գիտենք ստացուած Ռէօնթկէնեան պատկերը կամ շողանկարը, նախ և առաջ մեր աչքին կը զարնէ կմախքին յատկութիւնը: Ոսկորները, որոնք մեր հիւսուածքներուն ամէնէն թանձր մասը կը կազմեն, անթափանցիկ են Ք. ճառագայթներուն, հետեւաբար բոլորովին յստակ կ'երևան, առաւել կամ նուազ մութ գոյնով, որ կը տարբերի ոսկորի զանազան մասերուն և անոնց կրած փոփոխութիւններուն համեմատ:

Ծիշդ ասոր շնորհիւ է որ կրնանք անմիջապէս ճշտել ոսկորի մը կտորած կամ ճեղքուած ըլլալը, բեկումին ճշգրիտ կէտը, անոր տե-

սակը, ուղղութիւնը, երկու մասերուն իրարմէ հեռացումը, եւայլն: Շոգաքննութեամբ և շոգանկարով կարելի է ճշգրէ ոսկրախախտումը, ոսկորի մը առողջ կամ փնասուած ըլլալը (օրկ. ոսկորի տիպէրիկութիւնը կարագային), յօդերուն, ոսկորներուն և կրճիկներուն անկանոնութիւնները, եւայլն:

Կմախքի յստակ պատկերին շուրջ կ'երեւի առաւել կամ նուազ անորոշ պատկեր մը, որ կազմուած է մարմնին կալուղ մասերէն: Ասոնք թափանցիկ են ճառագայթներուն, հետեւաբար նուազ տեսանելի են քան կմախքը: Այսուհանգերձ այդ կալուղ մասերէն ոմանք բաւական յստակ պատկեր մը կը կազմեն, ինչպէս սիրտը, խոշոր երակները, որոնց վիճակին մասին կրնանք որոշ գաղափար կազմել: Թոքերը, եթէ առողջ են, թափանցիկ աղօտ պատկեր մը կը կազմեն, իսկ եթէ փնասուած են՝ այդ թափանցկոտութիւնը կը նուազի և սեւ մասեր կը գծագրուին: Լանջաթաղանթն ալ (թոքերը պատող թաղանթը) երբ հեղուկով կը լեցուի, կ'ընդարձակուի և որոշ յայտնի կ'ըլլայ:

Աղիքները և առնաստրակ խոռոչաւոր գործարանները շատ թափանցիկ ըլլալուն համար բնական վիճակի մէջ գրեթէ չեն տեսնուիր. զանոնք տեսանելի դարձնելու համար անոնց մէջ կը դրկեն Բ. ճառագայթներուն անթափանցելի կարգ մը նիւթեր, օրկ. Պիլմուլմի և Պարիմի բաղադրութիւններ: Ասոնց շնորհիւ քննութեան ենթարկուած գործարանը մութ գոյնով յստակ կը տեսնուի և կարելի կ'ըլլայ ճշգրէ անոր վիճակը կամ կրած փոփոխութիւններն ու փնասնելը: Այս միջոցին կը զիմն՝ ստամոքսին, աղիքներուն, միզափամփուշտին, արզանդին, ցնցուղներուն, եւայլն, վիճակին մասին տեղեկութիւններ քաղելու համար:

Ուռերու ախտաճանաչումին համար ևս շոգաքննութիւնը մեծ ծառայութիւն կը մատուցանէ: Ծառագայթներով երեւան կը հանուին նաև մարմնին մէջ գտնուող օտար առարկաներ (մետաղէ գնդակ, գրնդանդ, ևլն.) ինչպէս նաև երիկամունքի, միզափամփուշտի և լեարդի աւազաքարերը:

Բ. ճառագայթները կը ծառայեն ոչ միայն ախտաճանաչութեան, այլ անոնց շնորհիւ կարելի է ճշգրիտ գործողութիւններ կատարել, գնդակ մը հանել, տեղահան ոսկոր մը տեղը դնել, կոտրած ոսկորի մը երկու կտորներուն փակիլը հակակշռել ևլն.: Չենք խօսիր Բ. ճառագայթներով դարմանումին մասին, որ բժշկութեան մաս կը կազմէ:

Այսպէս ուրեմն շոգաքննութիւնը և շոգանկարումը, ինչպէս բժշկին, վիրաբոյսին համար ևս շատ կարեւոր օժանդակ գործոններ են: Սակայն պէտք է բացարձակ արժէք վերագրել անոնց և ենթադրել թէ շոգաքննութիւնով կամ շոգանկարումով կարելի է ամէն տեսակ հիւանդութիւններ ախտաճանաչել, ինչպէս ժողովուրդը հակամէտ է կարծելու:

ԲԺ. ԱՐՄ. ՍԻՐՈՒՆԵԱՆ